

Է. ՍԵՏՈՆ-ՏՈՄՍՈՆ

# Թ Ե Ի Ա Ի Ո Ր Ը

Մի պոսային աղանու պատմութիւն



Թարգմ. ուղտեհնից  
Ե Փ Ր Ե Մ Ս Ա Ր Գ Ս Ե Ա Ն

825

Ս-42

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Ն. Սողանեանի Պոլից. 7.

1916



30 MAY 2011

Հրատարակուիւն «ՆԻԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ» քնկ.

№ 31.

ՍԿ/2

Է. ՍԵՏՈՆ-ՏՈՄՊՍՈՆ

826.

U-42

այ.

# Թ Ե Ի Ա Ի Ո Ր Ը

Մի պոսային աղանու պատմութիւն

○○○○○○○○

1007  
P30984

Թարգմ. ուսուրէնից  
Ե Փ Ր Ե Մ Ս Ա Ր Գ Ս Ե Ա Ն

Յաներած «Հասկեր» ամսագրի

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Ն. Աղանեանի, Պոլից. 7

1 9 1 6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

# Թ Ե Ի Ա Ի Ո Ր Ը

## Մի պոստային աղանու պատմութիւն (\*)

I

Մենք մտանք Ամերիկայի Նիւ-Եօրք քաղաքի Տասնեկիններորդ փողոցում գտնուող մեծ գոմը: Որքան որ նեղ սանդուղքով դէպի վերնատունն էինք բարձրանում, այնքան գոմի հազիւ նշմարելի հոտը փոխում էր խոտի հոտի: Ծանօթ մշիւնն ու թւերի թափահարութեան ձայները ցոյց էին տալիս, որ մենք գտնուում ենք աղանետանը:

Այս վերնատանը ապրում էին բազմաթիւ

\*) Հին յոյներն ու չինացիները աղանիների մի քանի տեսակ ծառայեցնում էին պոստային հաղորդակցութեան համար: Ներկայումս էլ գոյութիւն ունին պոստային աղանիների շատ տեսակներ և համարեա թէ ամեն մի պետութեան մէջ կան աղանիների պոստային կայարաններ: Ռուսաստանում այդպիսի կայարաններ կան Պետրոգրադում, Կիևում և մի քանի ուրիշ քաղաքներում: Աղանիները մի ժամուայ մէջ թռչում են երբեմն 100, իսկ միջին թռուկ 50—60 վերստ: Եթէ աղանուն լաւ խնամեն, նա կարող է ծառայել մարզուն 8 նոյնիսկ 10 տարի:

Ծանօթ. ոռու. թարգմանչի

աղաւնիներ: Այդ օրը պիտի տեղի ունենար 50 զոյգ աղաւնիների մրցութիւնը: Աղաւնետան տէրը ինձ խնդրեց լինել նրանց անաչառ դատաւորը:

Մատաղ աղաւնիներին իրենց ծնողների հետ մի քանի անգամ արդէն դուրս էին թողել և թոյլ տւել, որ ինքնագլուխ տուն գան: Բայց այսօր, առաջին անգամ, նրանք պիտի թռչէին հեռւից, մի ուրիշ քաղաքից:

—Միայն այսպիսի մրցութիւնների միջոցով ենք ազատուում տկարամիտներից,—ասաւ աղաւնետան տէրը:—Միմիայն խելօք աղաւնիներն են տուն վերադառնում, իսկ մեզ էլ հէնց այդպիսիներն են պէտք:

Հետաքրքիր տեսարանը դիտելու համար հաւաքւել էին մի քանի հարևաններ և ծանօթ աղաւնետէրեր: Սրանցից համարեա թէ իւրաքանչիւրն առանձնապէս հետաքրքրուում էր որոշ աղաւնով, որին առաջուց հաւանել էր, և պատրաստ էր իր ընտրածի համար գրագ գալու: Որոշած էր մրցութեան մէջ յաղթող համարել այն աղաւնուն, որ առաջինը կրվերադառնար աղաւնետուն: Չէ որ այն պոստային աղաւնին, որը վերադառնալով իրեն ծանօթ տեղը, չիկարողանայ գտնել իր բունը, շատ էլ օգուտ չի բերի մարդուն:

Ինձ խնդրեցին լինել դատաւոր և որոշել, թէ աղաւնիներից ո՞րը առաջինը տուն կըհասնի:

Պոստային աղաւնիները աչքի չեն ընկնում ոչ մի առանձին գոյնով և ոչ որևէ զարմանալի յատկութեամբ, որ ունին խանութների լուսամուտներում ցոյցի դրած հազագիւտ թռչունները:

Պոստային աղաւնիներ բուծանելիս աշխատում են ստանալ ոչ թէ գեղեցիկ, այլ խելացի և ուժեղ թևերով թռչուններ: Նրանք պէտք է շատ լաւ ճանաչեն իրենց բունը և անսխալ գտնեն ճամփան: Պէտք եղած ուղղութիւնը որոշելու, անծանօթ տեղերից ճամփայ գտնելու, դուրս գալու համար պոստային աղաւնուց ընդունակ էակ չըկայ:

Վերնատան արտաքին պատի մէջ եղած բոլոր լուսամուտները, բացի մէկից, փակեցի: Այդ մէկն էլ պէտք է փակէի, հէնց որ առաջին աղաւնին տեղ հասնէր և ներս մտնէր:

Այդ օրը ես երբէք չեմ մոռանայ:

Ինձ նախագգուշացրին, որ աղաւնիները ճամփայ կընկնեն ցերեկայ ժամը 12-ին, իսկ մէկի կէսին արդէն տեղ հասած կըլինեն:

—Բայց լաւ նայեցէք,—ասացին ինձ,—նրանք սլանում են քամու նման և մինչև նկատէք, արդէն ներս մտած կըլինեն:

Մենք շարւեցինք վերնատան ներսը—արտաքին պատի երկարութեամբ և ակնապիշ նայում էինք դէպի հարաւ-արևելք: Յանկարծ մէկը գուաց.

—Նայեցէք, նրանք են:

Եւ իրօք, տանիքների վրա ցածրացած երեւաց մի շարժող սպիտակ ամպ. նրանք անցան մի քանի բարձր ծխնելոյզներ և երկու վայրկեանից յետոյ աղանիսներն արդէն տանն էին:

Նրանց յայտնելը այնքան անսպասելի էր, արևի տակ նրանց սպիտակ թևերի փայլիլելը այնքան աչք ծակող, իսկ թռիչքի աղմուկը այնքան մեծ, որ ես, չընայած նախազգուշացմանը, յանկարծակիի եկայ և ինձ կորցրի:

Ես կանգնած էի միակ բաց լուսամուտի առաջ: Մի ինչ որ կապոյտ բան ներս խուժեց, իր փետուրներով քսւեց ինձ և սլացաւ առաջ: Ես հագիւ էի փակել լուսամուտի փեղկը, երբ լսեց յաղթական աղաղակը.

—Թևաւորն է, Թևաւորն է: Ես ձեզ չասացի՞ նա կրկին: Օ, իմ սիրելիս: Ընդամենը երեք ամսական է և արդէն յաղթող է մրցութեան մէջ: Իմ սիրունիկ, փոքրիկս:

Եւ Թևաւորի տէրը ուրախութիւնից թռչկոտում էր, աւելի շուտ հպարտանալով իր աղանոյ, քան տարած գրագով:

Բոլոր ներկայ եղողները կուսցան դէպի Թևաւորը և մեծ ուշադրութեամբ հետևում էին, թէ ինչպէս նա առաջ մի փոքր շուր խմեց և ապա սկսեց նախօրօք պատրաստած կերակուրը կտցահարել:

—Նայեցէք սրա աչքերին, թևերին. իսկի

այսպիսի կուրծք երբևիցէ տեսել էք,—հիանում էր նրա տէրը:

Սակայն շրջապատողները իրենց ընտրած աղանիսների վրա դրած յոյսերի մէջ խաբւած՝ դէմքերը մռայլ լուել էին:

Սա Թևաւորի առաջին թռիչքն էր: Նա իրօք աղանիսներով հռչակւած այս աղանետան ամենալաւ աղանիս հանդիսացաւ և փառաւոր ապագայ էր խոստանում:

Նա նւէր ստացաւ մի արծաթէ ապարանջան. այս պատւանշանը հագցնում են այն աղանիսների ոտին, որոնք արժանի են համարւում մարդու համբաւաբերը լինելու: Ապարանջանի վրա փորագրւած էր Թևաւորի համարը—2590-րդ: Պոստային աղանիսների հետ գործ ունեցողներին այս թիւը շատ բան է ասում:

Այդ անգամւայ մրցութեան մասնակից 50 աղանիսներից տուն վերադարձան քառասունը միայն: Սովորաբար այդպէս էլ լինում է: Թրուչուններից մի քանիսը թուլութեան պատճառով մնում են ճանապարհին, իսկ ուրիշները թուլամտութեան պատճառով երամից հեռանում են: Պոստային աղանիսներ բազմացնողներին այսպիսի մրցութիւնները հնարաւորութիւն են տալիս—իրենց երամը հարկաւոր բարձրութեան վրա պահելու, որովհետև հեռաւոր թռիչքների

ժամանակ թոյլ և տխմար թռչուններն իրենք իրենք հեռանում են և մնում են միայն ուժեղներն ու սովորները:

Ետ մնացած տասը աղանիներէց հինգը բոլորովին կորան, իսկ մնացած հինգը, նոյն օրը մէկը միւսի ետեւից, մէկ-մէկ վերադարձան: Ամենից ուշ եկաւ մի մեծ կապոյտ, ծանրաշարժ աղանի, որի գալուն պէս աղանետէրը բացականսէց.

— Ահա և մեր ցանցառամիտը, որի համար Յակոբը գրազ էր բռնել: Ես իսկի չէի էլ կարծում թէ սա կը վերադառնայ: Ասենք շատ էլ դարդ չէի անի: Ես հաւատացած եմ, որ սա վայրի աղանիների ցեղից է:

Այս աղանին, որին հարթ և վառ-կապոյտ փետուերների համար «կապոյտ» էին անւանում, սկզբում անսովոր ուժ էր ցոյց տալիս: Երամբ մէջ թէև բոլոր թռչուններն էլ մի հասակի էին, բայց սա միւսներից աւելի էր մեծացել և աւելի գեղեցիկ էր, — թէպէտև սրա գեղեցկութեան մասին տէրը քիչ էր հոգացել: Կարծես թէ թռչունը շատ լաւ գիտակցում էր իր առաւելութիւնները, — և շատ վաղ հասակում ցանկութիւն էր երևան հանում կուելու իր աւելի փոքրօքի ցեղակիցների հետ: Աղանետի շրջ կարծիքով նա մեծ ապագայ էր խոստանում, սակայն թռչուններին խնամող Բիլիին նրա

պարանոցի երկարութիւնն ու իրանի մեծութիւնը զարմացնում էին:

— Այս երկար ոտները միայն աւելորդ ծանրութիւն են, իսկ այս ձևի պարանոցը թռչելու ժամանակ բանի պէտք չէ, — փնթփնթում էր Բիլին, գլուխը թափահարում, ամեն առաւօտ աղանետունը կարգաւորելիս:

## II.

Առաջին թռիչքից յետոյ մատաղ աղանիների վարժութիւնները սովորական կարգով շարունակեցին: Թռչելու տարածութիւնը ամեն անգամ 25-30 մղոնով աւելացնում էին. իսկ թռիչքի ուղղութիւնը այնքան փոփոխեցին, մինչև որ թռչունները ճանաչեցին Նիւ-Եօրքի շրջակայքը 125 մղոն տարածութեան վրա: Յիսուն աղանուց հետզհետէ մնացին միայն քսանը, որովհետև հեռաւոր թռիչքների ժամանակ ետ էին մնում ոչ միայն թոյլերն ու վատակազմները, այլև նրանք, որոնք ճանապարհին պատահամբ վասուում էին կամ թռչելուց առաջ շատ էին ուտում:

Այս խմբում լաւ աղանիներ շատ կային. կային՝ լայն կրծքով, սրատես—կարծես յատկապէս հեռաւոր ու արագ թռիչքների և մարդոց նեղ ըսպէին կարևոր ծառայութիւն մատուցանելու համար ստեղծւած—ուժեղ թևերով

Թռչուններ: Սրանք բոլորն էլ մեծ մասամբ կապոյտ կամ սպիտակ փետուրներ ունէին. ուրիշ աչքի ընկնող նշաններ չունէին, բացի փայլփլուն հայեացքից և ականջների մօտ գտնուած առանձնայատուկ մսազնգերից, որ ունեն բոլոր զըտարիւն պոստային աղանիները:

Բայց ամենից տոհմիկը, ամենից արագաթռիչքը Թևաւորն էր: Աղաւնետանը նա միւսներից ոչնչով չէր զանազանուում, մանաւանդ որ շուտով քսան աղաւնու ոտներն էլ զարդարւեցին արծաթէ ապարանջաններով: Սակայն Թևաւորը իր շնորհքը ցոյց էր տալիս ազատութեան մէջ: Երբ աղաւնետան լուսամուտները «Յառնջ» բարձր գոռոցով բացուում էին, առաջինը Թևաւորն էր անյայտանում կապոյտ եթերում, թռչում էր առանց մի վայրկեան կանգ առնելու և տան ճանապարհը բոլորից շուտ և լաւ էր գտնում:

Չընայած Բիլիի գուշակութեանը՝ մեծ կապոյտը՝ քսան ամենալաւ աղաւնիների թուումն էր: Ճիշտ է, նա յաճախ ամենից ուշ էր տուն վերադառնում և չէր պատահում, որ առաջինը լինէր: Երբ նա ուրիշներից մի քանի ժամ ուշ տուն վերադառնալիս քաղցի և ծարաւի ոչ մի նշան չէր ցոյց տալիս, բոլորի համար պարզ էր, որ ճանապարհին իր հոգսը քաշել էր: Յամենայն դէպս նա միշտ էլ վերադառնում էր հարազատ աղաւնետունը և ուրիշների նման

նրա ոտին էլ փայլում էր արծաթէ ապարանջանը իր համարով:

Բիլին ատում էր նրան և միշտ համեմատում Թևաւորի հետ, բայց նրա տէրը առարկում էր.

—Սպասեցէք, թող մի յարմար դէպք գայ: Ինչոր շատ է հասունանամ, շուտ էլ թառամում է: Ես նկատել եմ, որ ամենալաւ թռչունները ամենից ուշ են հասունանում:

Մի տարի չանցած, Թևաւորը արժանացաւ «Պոստային աղաւնիներ բազմացնող ընկերութեան» առաջին նւէրին:

Պոստային աղաւնիների կտարած թռիչքներից ամենադժւարը շրային մեծ տարածութեան վրա թռչելն է, որտեղ ոչ մի առաջնորդող նշան չըկայ: Առանձնապէս դժւար է թռչել մառախուղի ժամանակ, երբ նրա թանձրութեան միջից նոյնիսկ արևը չի երևում: Սակայն եթէ աղաւնու յիշողութիւնը, տեսողութիւնն և լսողութիւնը նրան ոչ մի ծառայութիւն չեն մատուցանում, նրան մնում է միայն մէկ միջոց, որը նրա էական կողմն է, այն է՝ բնածին հոտառութիւն. այս գլխաւոր յատկութեան շնորհիւ աղաւնին որոշում է իր բնի ուղղութիւնը: Այս հոտառութիւնը չքանում է միայն սաստիկ վախի ժամանակ: Այստեղից պարզ երևում է, թէ ռըքան կարևոր է, որ պոստային



աղանու զօրեղ կրծքում բաբախի մի համար-  
ձակ սիրտ:

Մէկ անգամ Թևաւորին և ուրիշ երկու ա-  
ղանինների տեղաւորեցին Եւրոպա մեկնող մեծ  
ովկիանային նաւի վրա: Որոշեց նրանց ազատ  
թողնել, երբ օփը աչքից կանհետանայ:

Սակայն շուտով ովկիանոսը ծածկեց  
թանձր մառախուղով և աղանիններին դէպի  
Նիւ-Եօրք եկող մի նաւի հետ տուն ուղարկե-  
ցին:

Տասժամեայ ճանապարհորդութիւնից յետոյ  
նաւի վրա մի սարսափելի դժբախտութիւն  
տեղի ունեցաւ՝ շոգեմեքենան փչացաւ: Թանձր  
մառախուղի մէջ, ովկիանոսի վրա նաւը տա-  
տանւում էր մի թեթև տաշեղի նման: Նա  
միայն աղիողորմ ձայնով սուլում և զուր տեղը  
օգնութիւն էր խնդրում:

Այս խորտակող նաւի վրա տիրապետող  
շփոթութեան և սարսափի մէջ, մէկը յանկարծ  
յիշեց իրենց ճանապարհորդակից—երեք պոս-  
տային աղանիններին: Նրանցից ընտրեցին մէ-  
կին, որն ունէր 2592 համարը. աղանու պոչի  
ներսի կողմից կապեցին մի խողովակաձև փա-  
թաթլաձև և անթրջելի կտորի մէջ կապլաձև հե-  
ռագիր: Երբ ամեն ինչ պատրաստ էր, թռչու-  
նին բաց թողին և նա վայրկենաբար կորաւ  
մառախուղի մէջ:

Կէս ժամից յետոյ թողին երկրորդ աղաւ-



նուն, սա կապոյտն էր: Նա թուաւ, բայց մի քանի վայրկեանից յետոյ վերագործաւ ու նրստեց նաւի կայմի վրա: Կապոյտը մարմնացած վախ էր: Թւում էր թէ աշխարհում ոչ մի բան չի կարող ստիպել նրան նորից թռչել ալեկոծւող ովկիանոսի վրա: Նրան հեշտութեամբ բռնեցին և նաւախորշը գցեցին:

Ապա տախտակամածի վրա դուրս բերին երրորդ աղանուն, մի փոքրիկ, նիհար թռչուն: Նաւավարները նրան չէին ճանաչում, բայց նրա ապարանջանի վրայի մակագրութիւնը կարդացին. «Թեաւոր № 2590-րդ»: Ի հարկէ նրանք այս մակագրութիւնից բան չընսակացան: Բայց Թեաւորին ձեռքում բռնող նաւաստին ուշագրութիւն դարձրեց այն բանի վրա, որ այս աղանուն սիրտը միւս երկուսի նման անմտաբար չի բարախում:

Թեաւորի պոչի տակ կապած հեռագրի բովանդակութիւնն այս էր.

«Առաւօտեան ժամը 10-ին. հինգշաբթի: Նիւ-Յօրքից 210 մղոն հեռաւորութեան վրա մեր նաւի մեքենան կոտրւեց: Մառախուղի մէջ միանգամայն անձար ենք մնացել: Որքան հնարաւոր է շուտ օգնութիւն հասցրէք: Իւրաքանչիւր մէկ ըրպէից յետոյ մենք երկու սուլոց ենք արձակում՝ մէկը երկար և միւսը կարճ:

Նաւապետ»

Թուղթը, որի վրա գրեցին Նիւ-Յօրքի Նա-

ւային Ընկերութեան հասցէն, գլանաձև փաթաթեցին, անթրջելի պատեանի մէջ դրին և կապեցին Թեաւորի պոչի մէջտեղը: Ապա նրան ազատ թողին:

Իրեն օդի մէջ գգալով, Թեաւորը նաւի վրա մի շրջան գծեց, ապա երկրորդը, աւելի բարձր և այդպիսի շրջաններով սաւառնեց վեր ու վեր, մինչև որ բոլորովին կորաւ ամպերի մէջ:

Այստեղ արդէն ոչ տեսողութիւնը և ոչ լսողութիւնը չէին կարող օգնել Թեաւորին. նա ամբողջովին անձնատուր եղաւ այն բուն, զօրեղ հոտառութեանը, որին նոյնիսկ վախը չէր կարող յաղթել: Առաջնորդելով հոտառութեամբ, Թեաւորը առանց տատանելու, կողմացոյցի սլաքի նման, միշտ մի ուղղութիւն էր բռնել, առանց կասկածի, առանց ուրիշ կողմ թեքելու և արդէն նաւից բաց թողնելուց մի ըրպէ յետոյ, նա լոյսի ճառագայթի նման ուղիղ դէպի աղանետուն էր թռչում, այն աղանետան, որտեղ ծնւել էր և ուր միայն ամբողջ աշխարհի երեսին իրեն իր տանն էր զգում:

Այդ օրը Բիլին աղանետանը զբաղւած էր, երբ լսեց արագ թափահարող թևերի ձայնը: Նա ետ դարձաւ և տեսաւ, թէ ինչպէս մի կապոյտ աղանի նետի պէս լուսամուտից ներս թռաւ և իսկոյն ջրի վրա վազեց: Բիլին նայեց մի վայրկեան, թէ ինչպէս աղանին ազահու-

Թեամբ ջուր է խմում, և յանկարծ բացահանչեց.

«Սա չէ որ իմ սիրունիկ Թեաւորն է»:

Իր սովորութեան համաձայն գրպանից հանեց ժամացոյցը և տեսաւ ցերեկայ 2 ժամ 40 րոպէն է: Յետոյ նորից Թեաւորին նայելով նկատեց նրա պոչին կապած ժապաւէնը: Բիլին արագ փակեց դուռն ու լուսամուտները և Թեաւորին ցանցով բռնեց. մի րոպէից հեռագիրը նրա ձեռքումն էր:

Հասցէն կարդալով, նա իսկոյն փողոց շտապեց և մի քանի րոպէից նաւային Ընկերութիւնը հասաւ: Այստեղ իմացաւ, որ Թեաւորը 210 մղոնը թռել է 4 ժամ 40 րոպէում ովկիանոսի թանձր մառախուղի միջից: Մի ժամից յետոյ՝ խորտակող նաւին անհրաժեշտ օգնութիւնն ուղարկեց:

210 մղոնը ովկիանոսի վրայով թանձր մառախուղի միջից 4 ժամ 40 րոպէում կարել: Սա մի փառաւոր գործ էր, որ իսկոյն «Պոստային աղանիներ բազմացնող ընկերութեան» ցուցակների մէջ անմահացաւ:

Սովորութեան համաձայն այս ընկերութեան քարտուղարը իր սեփական ձեռքով, անջնջելի թանաքով, Թեաւորի աջ թևի փետուրի վրա գրեց նրա քաջագործութեան մանրամասն դեկուցումը:

Նաւից ուղարկւած երկրորդ աղանին ան-

հետ կորաւ. երևի նա զոհ գնաց կատաղի ովկիանոսին: Կապոյտին աղանեպուն հասցրին ուղղակի նաւախորշից:

III

Այսպէս տեղի ունեցաւ Թեաւորի առաջին սխրագործութիւնը: Դրան արագ-արագ հետևեցին նորերը և հին աղանետանը յաճախ էին պատահում հետաքրքիր տեսարաններ, որոնց հերոսը Թեաւորն էր:

Մէկ անգամ, օրինակ, աղանետան դրանը կանգնեց մի շքակառք: Կառքից դուրս եկաւ մի ծեր մարդ, փոշոտ սանդուղքով վեր բարձրացաւ և ամբողջ առաւօտը Բիլիի հետ նստեց աղանետանը: Նա իր ոսկեշրջան ակնոցներով նայում էր մէկ՝ առաջը դրած թղթերի ծալքին, մէկ էլ՝ լուսամուտի միւս կողմը տարածող տանիքների և ծխնելոյզների ծովին: Ի՞նչի էր սպասում նա, անհանգստութեամբ հեռուն դիտելով:

Նա Նիւ-Եօրքից 40 մղոն հեռու գտնւող մի քաղաքից լուրերի էր սպասում, լուրերի, որ իրեն համար շատ կարևոր էին և որոնցից կախւած էր նրա գործի ծաղկումը կամ քայքայումը:

Նա ցանկանում էր այդ լուրերը հեռագրից

1002  
30984

էլ շուտ իմանալ. հեռագիրը նա հազիւ Չ ժամ-  
ւայ ընթացքում ստանար:

Իսկ ի՞նչը կամ ո՞վ հեռագրից էլ շուտ կը  
հաղորդէր այդ տեղեկութիւնը, եթէ ոչ միայն  
առաջնակարգ պոստային աղանին:

Պարոնը աղանետան տիրոջը յայտնեց, որ  
ինքը պատրաստ է մեծ գումար վճարել, միայն  
թէ իրեն ամենալաւ աղանին տան: Նրան ի  
հարկէ առաջարկեցին Թեաւորը:

Թեաւորին տարել էին այն քաղաքը և գոր-  
ծը վճուելուն պէս, հեռագրով հանդերձ, պէտք է  
Նիւ-Յորք ուղարկէին:

Անցաւ մէկ ժամ, երկու երրորդի կի-  
սին ինչ որ թեքի ձայն լսեց և նետի պէս  
աղանետուն սլաց մի կապոյտ աղանի: Բի-  
լին դուռը փակեց և բռնեց նրան: Անհամբե-  
րութեամբ ժապաւէնը քանդելով նա հանեց հե-  
ռագիրը և տւեց ծերունուն: Սա դողդոջ ձեռ-  
քերով բաց արեց.

— Փանք Աստու, — բացականչեց ծերու-  
նին, կարդալով կարճ տեղեկութիւնը: Փոքրիկ  
Թեաւորը փրկել էր նրան:

Այս դրամատէրը ցանկանալով հոգալ Թե-  
ւաւորի մասին, ուղեց գնել նրան. սակայն  
Բիլիի պատասխանը կարճ էր և պարզ.

— Ինչի՞ համար էք այդ անում —, ասացնա, —  
Չէ որ դուք նրա սիրտը չէք կարող գրաւել:  
Նա ձեզ մօտ կապրի որպէս մի գերի — և միայն

այդ: Սեփական աղանետունը նրա համար ա-  
մեն ինչ է:

Այդպիսով Թեաւորը մնաց Տասնկիններորդ  
փողոցում: Բայց դրամատէրը նրան չըմոռացաւ:

## IV

Շուտով պէտք է տեղի ունենար պոստա-  
յին աղանիների մրցութիւնը: Նրանք պէտք է  
թուչէին 900 մղոն տարածութիւն՝ Չիկագոյից —  
Նիւ-Յորք: Նշանակւած օրից վեց ամիս առաջ  
Թեաւորին էլ գրեցին մրցողների թւում: Շա-  
տերը գրազ էին բռնում նրա յաղթութեան հա-  
մար և հաւատացած էին, որ չեն յուսախաբւի:

Մրցող աղանիները երկաթուղով ուղարկ-  
ւեցին Չիկագօ: Այնտեղից մրցութեան պայ-  
մանների համաձայն նրանց հերթով բաց էին  
թողնելու: Ամենից յետոյ արձակեցին Թեաւո-  
րին:

Մրցակիցները առանց ժամանակ կորցնե-  
լու չլեցին Չիկագոյից: Մղւելով իրենց յատուկ  
հոտառութիւնով, նրանք մի երամ կազմեցին,  
որը կարծես թէ արդէն որոշւած գծով ուղե-  
ւորւեց դէպի Նիւ-Յորք:

Պոստային աղանին թուշում է մի ուղիղ  
գծով, եթէ ենթարկւում է միայն իր սեփական  
հոտառութեանը: Բայց երբ նա թուշում է իրեն  
ծանօթ տեղով, այն ժամանակ աշխատում է

առաջնորդել այն առարկաներով, որոնք առաջուց տպաւորւել են իր յիշողութեան մէջ:

Մրցող աղանիւններից շատերը վարժուել էին Կոլումբիա-Բուֆալօ ճանապարհին: Թեւաւորն էլ գիտէր այդ ճանապարհը, բայց նա գիտէր և աւելի կարճ ճանապարհ՝ Դետրուայի վրայով: Անցնելով Միչիգան լիճը, նա ուղղւորւեց դէպի Դետրուա, այսպիսով շահելով շատ մղոններ:

Դետրուան, Բուֆալօն, Րեգեստը իրենց ծանօթ տանիքներով ու ծխնելոյզներով փայլում էին նրա հայեացքին և նա մօտենում էր Միրակուսային: Կէսօրից յետոյ էր: 12 ժամւայ ընթացքում նա թռել էր 600 մղոն և յաւանօրէն այժմ երամից առաջ էր անցել: Բայց երկար թռիչքի ժամանակ տանջող սովորական ծարաւը սկսել էր նրան թուլացնել: Քաղաքի տանիքների վրայով կամաց սաւառնելով, նա իր սրատես աչքերով հեռւից նկատեց մի օտար աղանետուն: Թեւաւորը մի քանի ընդարձակ պտոյտներով ցած իջաւ և մի խումբ աղանիւնների հետ ներս մտաւ: Այստեղ վրա պրծաւ ջրին և սկսեց ազահութեամբ խմել: Առաջին անգամը չէր որ նա ճանապարհին օտար աղանետանը կանգ էր առնում.— չէ որ աղանետուն ամեն մի սիրող ուրախութեամբ տեղ կըտար մօտից թռչող աղանուն:

Միրակուսայի աղանետէրը իսկոյն նկատեց օտար աղանուն, մօտեցաւ և հանգստու-

թեամբ դիտում էր նրան: Աղանիւններից մէկը ցանկացաւ կուր բռնւել Թեւաւորի հետ, բայց սա մի քիչ հեռու թռաւ: Այս միջոցին աղանետաիրող հայեացքն ընկաւ նրա թևին, որտեղ փայլում էր նրա սխրագործութիւնների պատմութիւնը: Աղանետէրը իսկոյն փակեց լուսամուտը և Թեւաւորը նրա գերին էր:

Նա ուղղեց Թեւաւորի թևերը և կարգաց բոլորը, ինչ որ գրած էր այնտեղ. դիտեց նաև արծաթէ ապարանջանը, որտեղ փայլին էր տալիս աղանետ անունը:

— Թեւաւոր, — բացականչեց նա. — Օ՛, ես շատ եմ լսել քո մասին, իմ սիրուն փոքրիկ: Որքան բախտաւոր եմ, որ դու իմ ձեռքն ընկար:

Ապա բաց արեց հեռագիրը նրա պոչից և կարդաց. «Թեւաւորը Չիկահոյից դուրս եկաւ այսօր առաւօտեան ժամը 4-ին, մասնակցելով աղանիւնների մրցութեանը Չիկահոյի և Նիւեօրքի միջև:

— Եւ այսպէս, ուրեմն նա 600 մղոնը թռել էր 12 ժամւայ մէջ: Թռչուն սրան կասեն, երդում եմ պատուովս, — բացականչեց աղանետէրը և զգուշութեամբ, համարեա թէ երկիւղածութեամբ Թեւաւորին դրեց վանդակի մէջ: — Գիտեմ, քեզ ոչ մի բանով ինձ մօտ ազատ պահել չեմ կարողանայ, — աւելացրեց նա. — Իսկ վանդակում գոնէ քեզնից սերունդ կըստանամ:

Այսպիսով Թեաւորը փակւեց մեծ և յարմար վանդակի մէջ: Նրա նոր տէրը ամեն ինչ արաւ, որ իր գերու կեանքը տանելի և հանգիստ լինի:

Սկզբում խեղճ աղանեսակը ամբողջ օրը վանդակի ցանցի երկաթներով վեր ու վար էր թռչում, փախչելու ճանապարհ որոնելով: Սակայն 4-րդ ամսում կարծես թէ այդ միտքը թողեց, այն ժամանակ վանդակը քցեցին և մի էգ աղանի: Բայց Թեաւորը իսկի չէր էլ նաշում նրան: Մի քանի ժամանակից յետոյ տէրը վերցրեց առաջին աղանուն և վանդակը դրեց մի ուրիշ էգ աղանի: Թեաւորը կրկին ուշադրութիւն չըդարձրեց էգի վրա: Նա չէր ուզում ստրկութեան մէջ բուն հիւսել: Այսպէս շարունակւեց մի ամբողջ տարի: Թեաւորը կամ կատաղութեամբ յարձակում էր իրեն մօտ գցած էգ աղանիներէ վրա, կամ ցոյց էր տալիս սառը անտարբերութիւն: Երբեմն ազատութեան ցանկութիւնը տիրում էր նրան նոր թափով և նա իր երկաթէ վանդակի մէջ մի կողմից միւսն էր ընկնում, ամբողջ ուժով կրճքով ծեծում պատերը:

Երբ նրա թևերից գրտաւած փետուրներն սկսեցին թափւել (նրանք թափւում են ամեն տարի), տէրը հոգածութեամբ հաւաքում էր նրբանց, որպէս թանկագին իրեր, իսկ ամեն մի

նոր երեացող փետուրի վրա խնամքով, նորից գրում էր հին մակագրութիւնը:

Այսպէս դանդաղութեամբ անցաւ երկու տարի: Տէրը Թեաւորին դրեց նոր վանդակի մէջ և դարձեալ նրա մօտ էգ աղանի քցեց: Թեաւորը սրան աւելի ընկերաբար վերաբերւեց. աղանետէրը համոզւեց, որ գոյգը ապագայ ճուտիկների համար բուն է պատրաստում:

Տէրը հաւատալով, որ Թեաւորը այլևս չի թռչի իր աղանետներից, առաջին անգամ բաց թողեց նրա վանդակի դուռը: Եւ այսպէս Թեաւորը նորից իրեն ազատ զգաց:

Արդեօք նա մի րոպէ տատանւեց, մնաց անորոշութեան մէջ: Ո՛չ, ոչ մի վայրկեան: Հէնց որ վանդակի դուռը բացւեց, նա շտապով դուրս ընկաւ, ուղղեց իր ուժեղ թևերը և առանց մտածելու իր թողած ընկերուհու մասին, դուրս թռաւ այդ ատելի բանտի բաց լուսամուտից և սաւառնեց հեռու:

---

 V

Տո՛ւն, հարազատ-սեփական տո՛ւն: Գուցէ երբէք մարդկային սիրտը այնպիսի բուն սիրով չի բաբախել իր տան համար, ինչպէս Թեաւորի սիրտը: Փորձութիւններն ու նեղութիւնները, որ նա կրել էր հին աղանետանը, բոլորը մոռացւեցին: Ո՛չ գերութեան տարիները,

ոչ ընկերուհու կապը, ոչ էլ մահւան վախը չըկարողացան նրա մէջ սպանել այդ ուժը: Եւ Թեւաւորը, եթէ ի հարկէ երգելու շնորհք ունենար, կերգէր, ինչպէս երգում են մարդիկ ամենամեծ ուրախութեան ընկալին: Դուրս գալով ազատ օդի մէջ, նա մեծ, ընդարձակ շրջաններով սկսեց բարձրանալ դէպի եթերը, աւելի բարձր և բարձր, քանի գնաց լայնացրեց այդ շրջանները, թռչելով որպէս մի նետ, կապոյտ անհունութեան մէջ թափահարելով իր սպիտակ թևերը, մինչև որ նրանք, որպէս հրհրատող կայծեր, սկսեցին փայլել արևի ճառագայթների տակ:

Նա սաւառնում էր ոչինչ չըտեսնելով և չըլսելով, բացի այն ուժգին երգից, որ երգում էր նրա սիրտը և որին նա ամբողջովին անձնատուր էր եղել: Նա նման էր մի նաւի նաւատիրի, բայց նրա դեկն ու կողմնացոյցը այդ նրա էութիւնն ընդգրկող բնագոյն էր: Ծառերից էլ հազարաւոր ոտնաչափ բարձր թռչելով, նա որպէս մի նետ սլանում էր դէպի հարաւ-արևմուտք: Նրա մարմնի երկու կողքին փայլիլող փոքրիկ և պայծառ կայծերը մարեցին կապոյտ անհունութեան մէջ և Թեւաւորը ընդմիշտ չբացաւ իր բանտապետի աչքից:

Ներքևում, հովտում սլանում էր ձեւընթաց գնացքը: Գնացքը շատ առաջ էր, բայց Թեւաւորը հասաւ, անցաւ նրանից և սլացաւ

խոր ձորերի, բլուրների վրայով, որոնց վրա չինարներ կատարները քամուց օրօրում էին:

Յանկարծ ծեր կաղնու փշակում հիւսւած բնից մի ուրուր գուրս եկաւ դէպի կապոյտ երկնակամարը. նկատելով աղաւնուն, սկսեց սաւառնել օդի մէջ և արգէն նրան իր որսն էր համարում: Թեւաւորը շուռ չեկաւ ոչ աջ, ոչ ձախ, չըբարձրացաւ կամ չիջաւ ոչ մի ոտնաչափ, ոչ մի վայրկեան չըզանդաղեցրեց իր թռիչքը:

Ուրուրը փրփուում էր սպառնալով նրան, բայց Թեւաւորը արագ սլացաւ նրա կողքից, ինչպէս երբեմն փոքրիկ եղնիկն է սլանում իրեն սպասող արջի կողքից. նրա միակ ցանկութիւնն էր՝ «Տո՛ւն, դէպի տո՛ւն»:

Նա այժմ թռչում էր իրեն լաւ ծանօթ ճանապարհով: Մի ժամից յետոյ հասաւ իր հարազատ բլուրներին և անցաւ: Հին և վաղուց իվեր ծանօթ տեղերի տեսքը նրա թևերին նոր ուժ տւեց: Նրա սիրտը երգում էր. «Տո՛ւն, դէպի տո՛ւն»:

Եւ ծարաւից պապակւած ու հեռուում օտգիսը տեսնող ճամփորդի նման, Թեւաւորը իր փայլուն աչքերով նկատեց Նիւ-Յօրքի շրջակայքը:

Այն բլուրից, որի վրայով այդ ընկալին թռչում էր Թեւաւորը, մի բազէ թռաւ: Այս բուր գիշատիչներից ամենաշեշտակին. հպարտ

իր ուժով և իր թևերով, Թևաւորին արդէն իրենն էր համարում: Նա բազմաթիւ աղանձներ էր քաշ տւել իր բունը և այժմ էլ կամաց-կամաց էր մօտենում որսին, տնտեսելով իր ուժերը և սպասելով յարմար վայրկեանի: Օ, որքան ճիշտ էր որոշում ամեն ժամանակ էլ այդ վայրկեանը: Ոչ վայրի բաղը և ոչ էլ նոյն իսկ ուրուրը չէին կարող խուսափել նրանից, որովհետև նա իսկական որսկան-բազէ էր: Ե՛տ դարձիր, Թևաւոր, վտանգաւոր բլուրների միւս կողմովը թռիր:

Գուք կարծում էք նա և՛տ դարձաւ. ո՛չ, երբէք: Չէ՞ որ նա Թևաւորն էր:— «Տո՛ւն, տո՛ւն, դէպի տո՛ւն»:— Նա միմիայն արագացրեց իր թռիչքը: Բազէն հետևեց ցած—բայց նրա առաջ փայլեց ինչ որ կապոյտ գունդ և չքացաւ...

Թևաւորը սլացաւ հովտի վրայով, որպէս պարսատիկից արձակւած մի քար: Երկու տարի էր ինչնա չէր տեսել այս Հուգսոնի հովիտը: Նա իջաւ դէպի հիւսիսային բամուց փրփռացող գետը: «Տո՛ւն, տո՛ւն, դէպի տո՛ւն»:

Նա թռաւ Պաուկիպսի քաղաքի վրայով և բոլորովին ցած սլանում էր գետի երկարութեամբ, որովհետև քամին խանգարում էր նրան բարձր թռչել: Աւա՛ղ, նա չափազանց ցած էր թռչում:

Ո՞ր շար ոգին դրդեց որսորդին հրացանով

դուրս գալ գետափի բլրի վրա: Ո՞ր շար ոգին նրա հայեացքն ուղղեց դէպի հիւսիս ընթացող այդ սպիտակ գնդի վրա: Օ, իմ Թևաւոր, մի մոռանայ այն վտանգները, որ կապւած են գետնին մօտ լինելու հետ: Չափազանց, ո՛, չափազանց ծանր ես թռչում բլուրի վրայով:

Բայց արդէն ուշ է: Լսւեց որսորդի հրացանի շնիկի շոր ձայնը և մահացու հարւածը դիպաւ Թևաւորի կրծքին:

Սակայն Թևաւորը չըսարսեց: Միայն գրեւորով ծածկւած սպիտակ փետուրները ցած թափւեցին: Այդ նրա ծովի վրա կատարած քաջագործութեան պատմութիւնն էր: Նրա կրծքի վրա երևաց մի մութ-կարմիր կէտ: Բայց Թևաւորը ձգտում էր դէպի տուն և մի վայրկեանում վտանգաւոր մարդուն թողեց իր ետևում: «Տո՛ւն, տո՛ւն, դէպի տո՛ւն»:

Սակայն տարօրինակ է, Թևաւորը առաջւայ նման արագ թռչել չէր կարողանում: Նրա քրքրւած թևերի մէջ քամին տարօրինակ աղմուկ էր բարձրացնում, իսկ կրծքի ցաւը խօսում էր խորտակւած ուժերի մասին: Բայց նա էլի առաջ էր սլանում: Այնտեղ երևում է նրա հարազատ անակը և կարծես թէ կրծքի ցաւը թեթևանում էր:

Երբ նա թռչում էր սեպացած ժայռերի և գետի վրայով, նրա հեռատես աչքերը պարզ նկատում էին քաղաքի բարձր պատնէշները:



Նրա թևերը կախուցին, աչքերը մթնեցին—սակայն տուն գնալու անգուսպ ցանկութիւնը աճում էր ուժգին:

Նա սլանում էր փայլիլող ջրի և ծառերի վրայով և վերջապէս մօտեցաւ այն տեղին, որտեղ ժայռերում, որպէս մի հին դղեակում, թագնւած էր բազէների բունը: Նրա բնակիչները հեռուից արդէն նկատել էին մօտեցող աղաւնուն: Թևաւորը նրանց վաղուց գիտէր: Այս բնի մէջ թափթրված էին շատ պոստային աղաւնիներին յանձնւած, չըկարդացած հեռագիրներ և շատ գրերով ծածկւած փետուրներ ցրիւ էին եկել նրա անհաս բարձրութիւնից: Բայց Թևաւորը այդ իսկ բնի մօտից շատ էր թռել անվտանգ և այժմ էլ առաջւայ նման, մօտենում էր նրան առանց տատանւելու:

Սակայն այժմ բոլորովին այլ էր նրա դրութիւնը. թշնամական հարւածը ջլատել էր նրա ուժերը և դանդաղեցրել թռիչքի արագութիւնը:

Եւ անա երկու բազէներ, երկու նետերի պէս ընկան նրա ետևից, — երկու ուժեղ և արագաթռիչ էակներ մի տանջւած և թոյլ Թևաւորի ետևից: Էլ պատմելու կարիք կ'այ, թէ ի՞նչ եղաւ յետոյ: Կարելի է նկարագրել փոքրիկ և քաջ սրտի տենջանքն ու կարօտը իր հարազատհայրենի տնակի, որին նա այնքան երկար ժամանակ ծարաւի էր:

Մի վայրկեանում ամեն ինչ վերջացաւ:

Բազէները յաղթական ճիչերով դարձան դէպի իրենց բունը և որսը, որ նրանք այստեղ բերին, փոքրիկ, համարձակ Թևաւորի վերջին մնացորդներն էին:

Թևաւորի աննման, գրոտւած թևերը թափթրվեցին ժայռերի վրա: Նրանք մնացին անձրևի և արևի ճառագայթների տակ, մինչև որ բնի տէրերը ոչնչացան և բունը քանդուեց:

Եւ ոչ ոք չիմացաւ չքնաղ թռչունի վախճանի մասին, մինչև որ բազէի բունը քանդող մարդը նրա աղբի և փոշու միջից չըգտաւ պոստային աղաւնու արծաթէ ապարանջանը, որի վրա կարգացւում էին թանկագին բառերը:

«Թևաւոր, № 2590»:



# „ՆԻԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ“

## ԸՆԿ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ խմբագրութեամբ «ՀԱՍԿԵՐ» ամսագրի

1. Գատցուղ—Ամիրան Դարեջանիձէ, փոխ. Ա.Թ. Խնկոյեանի . . . . . 25 Կ.
2. Սէյրի—Դերձակի աշակերտը, վօղըւիլ . . . . . 10 Ծ
3. Աղւէսն ու պուտուկը, Ոսկի ձկնիկ, Պսակ—  
պսակ—պատկերազարդ հեքիաթներ . . . . . 10 Ծ
4. Ս. Գալաչեան—Կապիկներ, ընագիտ. զրոյց . . . . . 10 Ծ
5. Մարկ Տէէն—Մահւան օղակը. պատմածք,  
Թարգմ. Մ. Թաւաքալեանի . . . . . 7 Ծ
6. Կ. Ստանիկովիչ—Պստիկ նաւաստին. պատ-  
մըւածք, Թարգ. Սիմակի . . . . . 5 Ծ
7. Մարգար Աւետիսեան — Երեք խրատներ  
Պղնձէ քաղաքի զրոյցներից . . . . . 20 Ծ
8. Է. Սէտոն-Տոմպտոն — Վինիպեգի գայլը.  
պատմ. հերոս կենդանիների կեանքից, Թարգ.  
Սիմակի . . . . . 20 Ծ
9. Լ. Պրայս եւ Զ. Զիլբերտ— Առասպելական  
հերոսներ. Թ. Գ. Իփէկեան . . . . . 2 Ծ
10. Ռուբէն Գաբրիէլեան—Ովկիանի Թագաւորը.  
Կէտի մասին, ընագիտական զրոյց . . . . . 1 Ծ
11. Մարգակերի աղջիկն ու խորհրդաւոր վար-  
պետը. Իտալական հէքիաթ. Ռուսերէնից  
Թարգ. Յովհ. Թումանեան . . . . . 1 Ծ
12. Խ. Բ. Բարայեան—Նոր ընկերուհի, Մանկա-  
կան պիէս, մէկ արարւածով: . . . . . 10 Ծ
13. Գ. Մեսեան—Ոսկեպողը, արեւելեան աւանդ. . . . . 10 Ծ
14. Փր. Փօկս—Մի ժամայ նախարարը, պատ-  
մւածք Թարգ. Ա.Թ. Խնկոյեանի . . . . . 15 Ծ
15. Զիպօն և Պիպօն . . . . . 25 Ծ

16. Ր. Կիպլինգ—Կոտուկօ, պատմաձք թարգ. նիկ. Սարգսեան . . . . . 5 »
17. Դր-Ամրչիս—Կարմիր մեխակ, պատմաձք, թարգմ. Բ. Վարդանեան . . . . . 8 »
18. Աղաքար—Թուխսը, մանկ. հեքիաթ . . . . . 12 »
19. Սօֆիա Գալաչեան—Այգեպանի մօտ . . . . . 10 »
20. Ուիդա—Տափաստանը, պատ. . . . . 10 »
21. Ս. Տէր-Աւետիբեան—Ուխտաւորները, Անտառի գիւտը . . . . . 8 »
22. Ս. Ս.—Պատահական ընկերութիւն. . . . . 4 »
23. Եփրեմ Սարգսեան—Փոթկանը . . . . . 4 »
24. Ինֆանցիել Թշնամիներ թարգ. Սօֆ. Գալաչեանի . . . . . 8 »
25. Կ. Մետրոպոլիտի—Ջուրը, պատմաձք . . . . . 4 »
26. Ա. Խնկոյեանի—Քարացած Բոյրը, հեքիաթ . . . . . 8 »
27. Աղաքար—Հորթարած Մուսին պօէմա . . . . . 15 »
28. Բայրօնն ու իր շունը, թարգ. Ա. Թ. Խնկոյեան . . . . . 5 »
29. Դ. Մամին Սիբիրեակ—Որդեգիրը, որսորդի պատմութիւններից ոռւս. թարգմ. Ս. Սոտնիկեան . . . . . 6 »
30. Ռաբինդրանատ Տագոր—Մահիկը, թարգմ. ոռւս. Հ. Թումանեան . . . . . 15 »
31. Է. Սետոն-Տոմպոն—Թիւարը, Մի պոստային աղանու պատմութիւն, թարգմ. ոռւս. Եփրեմ Սարգսեան . . . . . 10 »

Handwritten text, possibly a signature or initials, located on the right edge of the paper.

ՀՀ Ազգային գրադարան



NL0390215

969

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.

Դրանի «Հասկերի» խմբագրություն. Թիֆլիս, Թիֆլիս,  
редакция „Аскеръ“.